

ՊԱՐՄԻՑ ԼԵԶՎԻ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՑԻՑ

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

Պարսկերենի կայուն բառակապակցությունների համակարգում ուրույն ենթահամակարգ են կազմում (ноги о пават) «բաղցրավենիք» տիպի հարադիր բառակապակցությունները: Ինչպես մնացած կարգի կայուն բառակապակցությունները, հարադրությունները լեզվական միավորի արժեք ունեն և օգտագործվում են որպես պատրաստի, վերարտադրելի ստեղծամաներ, կիրառվելով ինչ-որ ձևի ու նշանակության միասնությունում: Նրանք պարսկերենում բավական մեծ քանակ են կազմում և ի հայտ են բերում ստեղծման լայն հնարավորություններ: Գոյություն ունեցող բառարաններում, սակայն, հարադրությունները դեռևս մասնակիորեն և բառագիտական ոչ լիարժեք սկզբունքներով են ներկայացված: Այս հանգամանքը բոս էություն պայմանավորել է նրանց շուտամասիրված մնալը: Մասնագիտական գրականության մեջ հանդիպող կցկտուր տեղեկությունները հիմնականում վերաբերում են հարադրությունների կառուցվածքին և մեծ մասամբ ունեն բառակազմական դիրքորոշում: Աշխատությունների միայն չնչին մասում է, որ հարադրությունները համարվում են կայուն բառակապակցությունների համակարգի բաղկացուցիչ: Սակայն այստեղ էլ մոտեցումը չի կրում հետեղական բնույթ. հարադրությունների միայն մի մասը վերագրվում է կայուն բառակապակցությունների դասին, իսկ մյուս մասը՝ բառային կազմին, որպես բարդությունների առանձնահատուկ միավորներ: Ինչ վերաբերում է այլ լեզուների հարադրությունների ուսումնասիրությանը, ապա այն որոշ լեզուներում կատարվել է (օրինակ Գերմաներենում³, անգլերենում⁴, ֆրդերենում⁵ և այլն), իսկ որոշ լեզուներում, օրինակ՝ հայերենում, պարսկերենում դեռևս՝ ոչ:

Պարսկերենում հարադիր բառակապակցությունները ունեն ցայտուն կառուցվածքային առանձնահատկություններ, որոնք վերաբերում են նրանց ձևին ու բովանդակությանը, նրանց համադասական շարահյուսական կառուցվածքին, նրանցում տեղի ունեցող բաղադրիչները՝ ընտրությանը ու նրանց տեղադրմանը հնչյունական, դիթմ-հնչերանգային լուրահատուկ օրինաչափությամբ, ինչպես և նրանց իմաստաբանական պայմանավորվածությանն ու քերականական-շարահյուսական համադրությունները⁶:

Այս առանձնահատկությունների քննարկումը լույս է սփռում հարադրությունների ոչ միայն զուտ ձևական կողմի, այլ նաև դրանց իմաստաբանական ու ոճական կառուցվածքի վրա, մասնավորապես այն հնարավորություն է ընձեռնում լուսաբանելու այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են հարադիր բառակապակցությունների իմաստների բնույթը, նրանց ձևավորման, ստեղծման ու արտահայտման եղանակներն ու միջոցները: Սույն հոդվածը նպատակ ունի բացահայտելու հարադրությունների նշանակությունների ձևավորման ուղիները:

Հարադիր բառակապակցությունների ամբողջական իմաստի ձևավորումը ի հակադրություն այլ տիպի կայուն բառակապակցությունների նշանակությունների ձևավորմանը, տեղի է ունենում բացարձակ ուրույն եղանակով, որը լուրահատուկ չէ ոչ բոս միավորին, ոչ ազատ բառակապակցության, ոչ էլ այլ տիպի դարձվածքային միավորների իմաստին:

Ժամանակակից պարսկերեն լեզվի հարադրությունների մի մեծ խումբ են կազմում այնպիսի ստեղծումներ, որոնց սեմանտիկական համարվում է բաղադրիչների նշանակությունների ուղղակի հանրագումարը: Այս խմբի մեջ են մտնում այն հարադրությունները, որոնց բաղադրիչները օգտագործվում են ուղղակի նշանակությամբ: Օրինակ՝ *пелар о мајар* հարադիր բառակապակցության երկու բաղադրիչները կառուցում կիրառվում են իրենց ուղղակի նշանակությամբ՝ «*пелар*»-ը հանդես է գալիս «հայր», իսկ «*мајар*»-ը «մայր» նշանակությամբ: Այլ կերպ ասած, *пелар о мајар* բառակապակցությունը, որն ստեղծվել է «ծնող» նշանակությունն արտահայտելու համար, բառացիորեն ներկայացվում է որպես «հայր ու մայր» կամ *саз о дохол* հարադիր բառակապակցության մեջ իրենց բառացի նշանակությամբ կիրառվող «*саз*» և «*дохол*»

բաղադրիչները, միանալով և ստեղծելով կառույց, իմաստային միացն որոշակի փոխակերպման են ենթարկվում, հիմք ծառայելով մի նոր, «երաժշտական գործիքներ» հանրագումարային հավաքական նշանակության ձևավորմանը: Այս սիպի նշանակությունը սովորաբար ավելի ընդհանուր է, քան բաղադրիչներից յուրաքանչյուրի նշանակությունը առանձին վերցրած և սովորաբար կրում է սեռային բնույթ՝ ի հակադրություն բաղադրիչների նշանակությունների, որոնք ունենում են տեսակային բնույթ: Այս ու նման օրինակները բավականին շատ են: Ստորև բերենք ևս մի քանի այս կարգի հարադրություններ՝

шух о шанг կատակասեր, ուրախ (բառացի՝ կատակասեր ու հաճելի)

аճ о данэ կերակուր (բառացի՝ ջուր և հատիկ)

дәст о на վերջավորություններ (բառացի՝ ձեռք ու ոտք)

ама во аһша ներքին օրգաններ (բառացի՝ աղիքներ, ներքին օրգաններ)

кәллә о паче խաշ (բառացի՝ գլուխ ու ոտք)

дҗар о дҗандҗал աղմուկ, աղմկարարություն (բառացի՝ աղմուկ, աղաղակ)

шаб о руз ամբողջ ժամանակ, միշտ (բառացի՝ գիշեր ու ցերեկ):

Հատկանշական է, որ նման հարադիր բառակապակցությունները, որոնք լայն տարածում ունեն ժողովրդական լեզվում, կիրառվում են նաև գրականության մեջ: Նրանք ժողովրդական խոսակցական լեզվի ստեղծումներն են և դարգացման ու գրական լեզվում օգտագործման տարբեր հնարավորություններ են ունեցել: Սակայն բառարաններում հաճախ սրանց դիմաց չի նըշվում, որ այդպիսիք ստեղծվել են ժողովրդական լեզվում, ապա մուտք գործել գրականության մեջ: Ոճական անհրաժեշտ նշանի բացակայությունը երբեմն հանգեցնում է այն սխալ պատկերացմանը, որ իբր դրանք գրական լեզվի ստեղծումներ են: Սակայն մեկ հանդիպող այս կարգի հարադիր բառակապակցություններից, ինչպես նաև ներքոհիշյալ խմբերին պատկանող հարադրություններից հազիվ թե գտնվեն այնպիսիները, որոնք ունենան զուտ գրական ծագում: Միանգամայն այլ փաստ է, որ քննարկվող խմբի հարադրությունները, ի տարբերություն մնացած խմբերի, ավելի ազատ են մուտք գործում ու տարածվում գրական լեզվում՝ ձեռք բերելով այդ լեզվի ինքնատուրյն միավորի իրավունքը:

Բառացի նշանակություններով բաղադրիչներ պարունակող հարադիր բառակապակցություններին խիստ հակադրվում են այն հարադիր ստեղծումները, որոնցում բաղադրիչները օգտագործվում են փոխաբերական նշանակություններով և այդ պատճառով նրանց ամբողջական կոմպլեքսի նշանակությունը «չի բխում» բաղադրիչների ուղղակի նշանակություններից: Այս տիպի հարադրությունները կրում են իդիոմատիկ բնույթ: Նրանք յուրատեսակ խումբ են կազմում և պետք է առանձին բացատրման առարկա ծառայեն:

Հարադիր բառակապակցությունները, որոնք կազմում են այս խումբը արտահայտում են փոխաբերական նշանակություն և բնութագրվում են ձևի ու բովանդակության բացարձակ կաշտնությունով: Շարահյուսական կիրառության տեսակետից նրանք ունեն լայն տարածում, կատարելով հիմնականում անվանական ֆունկցիա, դրսևորելով բառ-միավորին յուրահատուկ լեքսիկական ունակությունները: Այսպիսի հարադրություններից, որպես օրինակ կարելի է բերել

бад о дам, бад о боруҗ («գոռողություն») կառույցը, որոնց բաղադրիչ մասերը կիրառվել են ոչ թե իրենց բառացի նշանակություններով, այլ իրենց իմաստային կառուցվածքի այս կամ այն փոխաբերական նշանակություններով: Бад-ի ուղղակի նշանակությունն է «բամի», дам-ինը՝ «շունչ», իսկ боруҗ-ինը՝ «բեղ»: Սակայն այս բաղադրիչները հարադրություններում օգտագործվում են ոչ թե նշված ուղղակի նշանակություններով, այլ իրենց յուրահատուկ որևէ մի փոխաբերական իմաստով՝ «գոռողամիտ», «մեծամիտ» նշանակությամբ, որի հիման վրա ձևավորվել է կոմպլեքսի ամբողջական նշանակությունը՝ «գոռողամտություն», «մեծամտություն»:

Նման օրինակ կարող են հանդիսանալ նաև՝

луд о дам, ամեն ինչ փոքր ուրախության, երեկույթի համար (բառացի՝ ծուխ և շունչ)

сал о маһ թվագրում, տարեցտարի, շարունակ (բառացի՝ տարի և ամիս)

ғол о ботэ վարդաբանդակ (բառացի՝ ծաղիկ ու թուփ)

аճ о хак տարածք, երկիր, հայրենիք (բառացի՝ ջուր և հող)

хат о неһаи գզուշացում, նախազգուշացում (բառացի՝ գիծ և նշան)

сабз о хоррам գեղատեսիլ (բառացի՝ կանաչ և ղվարթ) և այլն:

Ահարժեշտ է նշել, որ այս խմբի հարադրությունները բաղադրիչների իմաստի բնույթի տեսակետից սկզբունքորեն տարբերվում են առաջին խմբի հարադրություններից ոչ միայն նրանով, որ նրանց երկու բաղադրիչները օգտագործվում են փոխաբերական իմաստով, այլև նրանով, որ նրանցում քիչ չեն դեպքերը, երբ բաղադրիչներից մեկը կամ նույնիսկ երկուսը կիրառվում

են անպիսի փոխաբերական իմաստով, որը ըստ էության յուրահատուկ չէ նրանց թառային-իմաստային կառուցվածքին և ձևեր է բերվում հարադրութիան ստեղծման պահին, նրա կառուցվածքի պայմաններում: Այսպես, օրինակ՝ աՅ օ խԱ հարադրությունը, որը բառացի նշանակում է «չոր» և «հող» կիրառված է «տարածք», «երկիր», «հայրենիք» ամբողջական նշանակությամբ: Գոյություն ունեցող բառարաններում (7, I, 529) խԱ բառի իմաստներն են՝ «հող», «տարածք», «երկիր» և այլն, որոնք յուրահատուկ չեն աՅ բառի իմաստային կառուցվածքին: Հետևապես, սովյալ հարադրությունում խԱ բառը օգտագործվում է իմաստային կառուցվածքի յուրահատուկ «տարածք», «երկիր» փոխաբերական իմաստներով: Մինչդեռ աՅ-ը այդ նշանակությունները, կամ այդ նշանակությունների յուրահատուկ ինչ-որ իմաստային ունակությունները, որոնց շնորհիվ նա կարող էր մտնել հարադրություն, հարադրությունից դուրս չունի և այն ձևեր է բերել նրա կառուցվածքի պայմաններում: Այսպիսի հարադրություններից են նաև ճԱԼ օ լԱՄ, ճԱԼ օ ՊՕՐՄԻ ՅԵՄԻՈ օ ՅԱՄԱՈ և այլ հարադրություններ, որոնց մեջ ևս բաղադրիչներից մեկը կիրառվում է կառուցիչ պայմաններում նրա կողմից ձևեր բերված փոխաբերական իմաստով:

Հատկանշական է այն փաստը, որ բերված օրինակների բաղադրիչները հարադրությունից դուրս սովյալ փոխաբերական նշանակությամբ, այլ կերպ ասած՝ ամբողջական կոմպլեքսի ընդհանուր նշանակությամբ չեն օգտագործվում, այն ձևեր են բերել հարադրությունում կիրառվելու շնորհիվ: Հարագիր բառակապակցությունների, որպես կաշուն բառակապակցությունների օրինակով, կարելի է ենթադրել, որ նման երևույթը, լինելով լեզվի իմաստային համակարգի դար-գացման գործոն, յուրահատուկ է առհասարակ կաշուն բառակապակցություններին: Այդ ակնհայտորեն երևում է, օրինակ «ՃԱԼ» բաղադրիչ բառի իմաստային կառուցվածքի ուսումնասիրությունից: Հրապարակի վրա եղած պարսկերեն և պարսկաաչալիզու բառարաններում «ՃԱԼ» բառի դիմաց բերվում են մի շարք լեքսիկական նշանակություններ: Նրանց նշանակությունների ամենամեծ քանակը չի գերազանցում 5-ից և նրանք, ըստ վերջերս լույս տեսած պարսկերեն-ուսերեն բառարանի սովյալների, հետևյալներն են՝ 1) քամի, 2) օդ, 3) դալ, դազեր, 4) շքնաշառույթ, շունչ, թեթև շունչ, 5) ուռուցք, ալտուցք և այլն (7, I, 156): «Գոռոզամտություն», «մեծամտություն» և այս կարգի նման նշանակությունները, «ՃԱԼ» բառին որպես լեքսիկական միավորի, յուրահատուկ չեն: Նրանք դրսևորվում են «ՃԱԼ»-ի մոտ նրա կաշուն բառակապակցություններում կիրառվելու դեպքում: Այսպես, օրինակ՝ վերը նշված բառարաններում թվարկված 5 նշանակություններից հետո մի շարք կաշուն բառակապակցությունների կողքին բերվում են նաև «баде саблат» («մեծամտություն», «գոռոզություն», բառացի՝ «բեղի քամի») «баде гису» («գոռոզամտություն» և այլն, բառացի՝ «վարսի քամի») (3—1-ին 156), որոնցում «ՃԱԼ»-ը ակնհայտորեն կիրառվում է «գոռոզամտություն», «մեծամտություն» նշանակություններով, իսկ «саблат» և «гису» բաղադրիչները փաստորեն ակնարկում են գոռոզության, մեծամտության վերագրումը անձ ցույց տվող գոյականին ըստ նրա սեռի պատկանելության՝ «саблат» սղամարդու համար, իսկ «гису» կանանց համար:

Վերցնենք ևս մի օրինակ, «САР» բառը, որ պարսկերեն-ուսերեն բառարանում ներկայացված է հետևյալ 8 նշանակություններով (7, 2-րդ հ. 26) գլուխ, սկիզբ, գագաթ, վերջ, եզր, մաքուր, կափարիչ, անասունի գլուխ, (դասանիչ), որոնցից գլուխը սովյալ բառի ուղղակի նշանակություն է, իսկ մնացածները փոխաբերական են և ձևավորվել են նրա իմաստային կառուցվածքի լայնացման տարբեր փուլերում: Սակայն մեղ հետաքրքրող բանը ունի նաև այլ փոխաբերական իմաստներ, որոնք նրա կողմից ներկայացվում են հարադրության պայմաններում, օրինակ՝ «САР օ СЭԼԱ» կառուցում, որի ընդհանուր նշանակությունն է «ձայն», «աղմուկ», «վեճ», «սկանդալ» և այլն, (համտ. բառացի նշանակությունը՝ «գլուխ» և «ձայն»): Այլ կերպ ասած՝ գլուխ բառը օգտագործվում է «աղմուկ» սեմանտիկական նշանակությամբ, կամ այդ նշանակության ինչ-որ մի նրբերանգով, որը բացակայում է նրա իրական իմաստային կառուցվածքում: Համտ. ևս САР օ СУРАТ հարադրության ամբողջական «արտաքին» նշանակությունը նրա «գլուխ» և «երես» բառացի նշանակության հետ: Կամ «САР» բառով մեկ ակ՝ «САР օ ВАЭ», կառուցիչ ընդհանուր «արտաքին տեսք» նշանակությունը, նրա «գլուխ» և «վիճակ» ըստացի նշանակության հետ և այլն:

Հիշյալ օրինակներից պարզ երևում է, որ քննարկվող խմբի երկու ենթախմբերին պատկանող հարադիր կառույցները դրսևորում են կայունության և ներքին կառուցվածքի հիմնավորման տարբեր շափեր, և այդ տարբերությունները բխում է նրանցում կիրառվող այս կամ այն բաղադրիչի լիիրավ կամ կառուցում ձևեր բերած փոխաբերական իմաստի բնույթից: Մասնավորապես այն հարադիր բառակապակցությունները, որոնցում երկու բաղադրիչները հանդես են գալիս իրենց սեմանտիկական իմաստային կառուցվածքին յուրահատուկ այս կամ այն փոխա-

բերական իմաստով, ներքին կառուցվածքի տեսակետից ավելի հեշտ են բացատրվում, մեկնաբանվում ու իմաստապես հիմնավորվում, քան այն հարադրուիթյունները, որոնցում բաղադրիչներից մեկը իրացվում է հարադրուիթյունում ձեռք բերած փոխաբերական իմաստով (տե՛ս վերը նշված «сал о маһ»)։ Վերջիններին իմաստի ներքին կառուցվածքի բացատրման տեսակետից մոտ են կանգնած հաջորդ՝ ներքոհիշյալ՝ երրորդ խմբի հարադրուիթյունները։

Այս հարադիր բառակապակցությունները բաղադրիչների նշանակուիթյուններին և իրենց իմաստային ներքին կառուցվածքի տեսակետից, վերոհիշյալ երկու խմբերի միջև միջանկյալ դիրք են գրավում։ Նրանք ստեղծվում են երկու տարբեր սեմանտիկական կաղապարներով, որոնք բնութագրվում են նրանով, որ իրացվում է ա) «փոխաբերական իմաստ» + «ուղղակի իմաստ» բ) «ուղղակի իմաստ + փոխաբերական իմաստ»։

Առաջին կարգի կաղապարով ստեղծվող հարադիր բառակապակցություններից, այլ կերպ ասած, առաջին փոխաբերական և երկրորդ ուղղակի նշանակուիթյամբ բաղադրիչներով ստեղծվող կառուցներից են, օրինակ՝ «ру йо рийта» (բառացի նշանակուիթյունը «երես» և «երկերեսուիթյուն» (ամբողջական նշանակուիթյունը՝ «երկերեսուիթյուն», «կեղծուիթյուն», «երեսապաշտուիթյուն»), «сар о сар») բառացի նշանակուիթյունը՝ «գուլս և գաղտնիք» ամբողջական նշանակուիթյունը՝ «գաղտնի կապ», «сар о кар» (բառացի նշանակուիթյունը՝ «գլուխ» և «լործ», ամբողջական նշանակուիթյունը՝ «գործ», «շփում», «հաղորդակցուիթյուն») «пар о пар» (բառացի նշանակուիթյունը՝ «փեսուր և ոտք», ամբողջական նշանակուիթյունը՝ «սրունք»), зад о бум (բառացի նշանակուիթյունը՝ «սերունդ» և «երկիր», ամբողջական նշանակուիթյունը՝ «Հայրենիք»)։ Зад о бум» (բառացի նշանակուիթյունը՝ «սերունդ» և «գոյուիթյուն», ամբողջական նշանակուիթյունը՝ «Գոյ») և այլն։

Իբրևած օրինակներից երևում է, որ այս կաղապարի հարադրուիթյուններին ամբողջական նշանակուիթյունը հիմնվում է գլխավորապես երկրորդ բաղադրիչների կողմից ներկայացվող ուղղակի նշանակուիթյունների վրա և փաստորեն չի բխում նախադիրքում օգտագործվող բաղադրիչների ուղղակի նշանակուիթյուններից, որովհետև վերջինները, եթե հարադրուիթյունում օգտագործվեն իրենց ուղղակի նշանակուիթյուններով, ապա այն կհանգեցնեն հարադրուիթյունների ստեղծման սեմանտիկական օրենքի խախտման, այլ խոսքով՝ հարադրուիթյունները չէին ստեղծվի։ Իսկ այս փաստը ակնառու ապացույց է այն բանի, որ նախադիրքում օգտագործվող բաղադրիչները կարող էին իրացվել ինչ որ փոխաբերական նշանակուիթյուններով, որոնք իրենց իմաստային բնույթով այս կամ այն առումով պայմանավորված են վերադիրքում օգտագործվող բաղադրիչների նշանակուիթյունների հետ։ Այս փաստին ստորև անդրադարձնում ենք նաև մեր կողմից նշված հաջորդ՝ «ուղղակի + փոխաբերական» կաղապարով հարադրուիթյունների մեկնաբանուիթյան դեպքում։ Վերջին կաղապարով ստեղծվող օրինակներից են. «пир о кыр» (բառացի նշանակուիթյունը՝ «ծիր» և «կուր») ամբողջական նշանակուիթյունը՝ «օրմահու», «դառնամյալ») տեսողուիթյան լրիվ կամ մասնակի բացառուիթյունը անշուշտ ավելի շատ յուրահատուկ է տարից մտրվեանց, «геш о шол» (բառացի նշանակուիթյունը՝ «ցիխ և թույլ»), ամբողջական նշանակուիթյունը՝ «ցիխ», «տիղմ») «сэр о сурт» (բառացի նշանակուիթյունը՝ «գաղտնիք» և «լուսուիթյուն» ամբողջական նշանակուիթյունը՝ «գաղտնիք»)։

Հետևապես՝ փոխաբերական իմաստով օգտագործվող բաղադրիչը ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ կաղապարի դեպքում ունի առանձնահատուկ իմաստային փոխակերպում, որը յուրահատուկ է երկրորդ խմբի այն հարադրուիթյուններին, որոնց բաղադրիչներից մեկին փոխաբերական իմաստը ձեռք է բերվում հարադրուիթյան կամ այլ տիպի կալուն բառակապակցուիթյունների կառուցվածքի պայմաններում և դրանցից դուրս, որպես առանձին իմաստային միավոր, գոյուիթյուն չունի։

Վերը նշված արդյունքներից պարզ երևում է, որ հարադրուիթյունների ամբողջական համակարգի նշանակուիթյունը, որպես յուրահատուկ իմաստային միավոր, ձևավորվում է նրանց կաղմի մեջ մտնող բաղադրիչների լեքսիկական նշանակուիթյունից և իր ծագումով պայմանավորված է դրանցով։ Նույնիսկ այն դեպքում, երբ բաղադրիչը այս կամ այն նշանակուիթյունը ձեռք է բերում հարադրուիթյան պայմաններում։

Այս վերջին փաստը հատուկ ընդգծման կարիք ունի այն իմաստով, որ հնարավորուիթյուն է տարիս ճանաչելու պարսից լեզվի հարադրուիթյունների երկու մեծ խմբեր. ա) հարադրուիթյուններ, որոնց կազմող բաղադրիչների նշանակուիթյունը նրանց իմաստային կառուցվածքի լիիրավ անդամներ են, բ) հարադրուիթյուններ, որոնց կազմի մեջ մտնող բաղադրիչներից մեկին կամ երկուսին նշանակուիթյունները ի հայտ են գալիս կառուցի ստեղծման պահին։ Եթե առաջին խմբի հարադրուիթյունների բաղադրիչների նշանակուիթյուններն իրավամբ համարում ենք բառարանային՝

լեքսիկական նշանակություններ, ապա երկրորդ խմբի հարադրությունների բաղադրիչների այն նշանակությունները, որոնք ի հայտ են գալիս կառուցյի ստեղծման պայմաններում, պայմանականորեն պետք է կոչվեն ենթատեքստային պայմանավորված լեքսիկական նշանակություններ⁸։ Հարադրությունների դերը շափաղանց մեծ է վերջին տիպի նշանակությունների ձևավորման և դրանով իսկ լեզվի իմաստային համակարգի զարգացման ու համալրման բնագավառում։ Այն պետք է դառնա հատուկ ուսումնասիրման առարկա, որովհետև լեզվի տեսության հարցերն ուսումնասիրողների համար ոչ քիչ նշանակություն է ներկայացնում այն հարցը, թե հարադրություններից բացի է՞լ ինչ կարգի լեզվական միավորներ են, որ ստեղծման, ձևավորման պահին առիթ են տալիս մեր կողմից կոչված ենթատեքստային պայմանավորված լեքսիկական նշանակության ստեղծմանը։ Միանգամայն այլ կարևորություն է ներկայացնում նաև այն հարցը, թե արդյոք այս կամ այն բաղադրիչը, որը կառուցյի պայմաններում օգտագործվում է այս կամ այն ենթատեքստային պայմանավորված լեքսիկական նշանակությամբ, ենթատեքստից դուրս ընդունա՞կ է օգտագործվելու։ Այս և նման երևույթները, որոնք վերաբերում են հարադրությունների տեսությանը, առանձին քննության նյութ է։ Ինչ վերաբերում է հարադրությունների ամբողջական կոմպլեքսի նշանակությունների տիպերին, որոնք ձևավորվում են բաղադրիչների նշանակությունների հիման վրա, անկախ նրանց բառարանային կամ ենթատեքստային պատկանելությունից, ապա նրանց տարբաբաժանումը մեր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կարելի է ներկայացնել այսպես։

Հարադրությունների նշանակությունները պարսկերենում լինում են երեք կարգի.

ա) ուղղակի նշանակություն, որը բաղադրիչների ուղղակի նշանակության սեմանտիկական պարզ հանրագումարն է և հանդիսանում է ամբողջական, սակայն ներքին առումով տարրալուծված նշանակություն։

բ) մասնակի փոխաբերական նշանակություն, որը կարող է հանդես գալ բաղադրիչներից մեկի փոխաբերական, մյուսի ուղղակի նշանակության մերման հետևանքով և ըստ կառուցվածքի կրում է ամբողջական, իսկ ներքնապես՝ մասնակի, տարրալուծված փոխաբերական բնույթ։

գ) փոխաբերական նշանակություն, որը կարող է ձևավորվել երկու բաղադրիչների փոխաբերական նշանակությունների փոխակերպման դեպքում և որպես օրենք ունի ամբողջական և ներքնապես միասնական կառուցվածք։

¹ «Фархангэ нафиси», в 5-ти томах, Тегеран, 1938. «Персидско-русский словарь», под редакцией Ю. А. Рубиничка, М., 1970.

² «Персидско-русский словарь», сост. проф. Б. В. Миллер, М., 1953.

³ Л. С. Пейсиков, Лексикология современного персидского языка, М., 1975, стр. 182, 183, Очерки по словообразованию персидского языка, М., 1973, с. 149.

⁴ И. И. Чернышева, Фразеология современного немецкого языка, М., 1970, с. 59, 61.

⁵ А. В. Кунин, Фразеология современного английского языка, М., 1972, с. 117.

⁶ М. У. Хамоян, Очерки именной фразеологии курдского языка, Ереван, 1971.

⁷ S' u Գ. Վ. Մելիքյան «Բանբեր Երևանի համալսարանի» 1975, № 2:

⁸ «Персидско-русский словарь», под ред. Ю. А. Рубиничка, М., 1970.

⁹ Լեզվաբանական տերմինների բառարանում Օ. Ս. Ախմանովան այսպիսի նշանակությունը անվանում է «էքստենսիոնալ նշանակություն»։

О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1966, с. 164.

Г. В. МЕЛИКЯН — К изучению семантической структуры парных сочетаний персидского языка.— В системе устойчивых словосочетаний современного персидского языка самостоятельную микросистему образуют парные устойчивые словосочетания, обнаруживающие специфические закономерности и способы формирования структуры, лексического наполнения и становления значения. В настоящей статье представляются результаты изучения особенностей их семантической структуры, в частности их классификация по типу общего синтезирующего значения: а) парные сочетания, образуемые словами-компонентами в их прямых значениях, имеют значение, являющееся простой суммой значений компонентов; б) парные сочетания, состоящие из компонентов в их переносных значениях, представляют полностью переосмысленное значение; в) парные сочетания, один из компонентов которых употребляется в переносном значении, а другой — в прямом, обнаруживают частично переосмысленное значение.